



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՋԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04-ը օգոստոսի 2023 թ. N 1501

Նոր Հաճրն

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և 912-Ն որոշումների, Նոր Գեղի գյուղի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 75 որոշմամբ՝ **որոշում եմ՝**

1. Նոր Հաճրն համայնքի, Նոր Գեղի գյուղի, Կ. Դեմիրճյան փողոցի, թիվ 22/3 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0.04905 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակությամբ հողամասում ինքնակամ կառուցված 51.13 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 17.5 քառակուսի մետր մակերեսով ծածկոցը, 15.52 քառակուսի մետր մակերեսով աստիճանհարթակը և 1.7 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել Նոր Հաճրն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական: (Հաշվառման ծածկագիր՝ 2023KJXFCH): Հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանեցնել գլխավոր հատակագծով նախատեսված նշանակությանը, փոփոխել գյուղատնտեսականից՝ բնակավայրերի նպատակին նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:

2) Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում:

3) շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցը իրականացրած Լիանա Գազիկի Քոչարյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝

Գ.Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50, Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2023 թվականի N 1502

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 18-ի <<Նոր Հաճրն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N21-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Նոր Հաճրն քաղաքի Իսահակյան փողոց շենք 6, բնակարան 23-ի բնակիչ Ալվարդ Սերոբյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2023 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Ալվարդ Սերոբյանին, ամուսնու՝ Հակոբ Ճաղարյանի թաղման ծախսերը հոգալու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝

Գ. Մաթևոսյան

04.08.2023թ.
ք. Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2023 թ. N 1503

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ որոշում եմ.

1. Ձևակերպել կառուցապատող Եղիսաբեթ Արտուշի Բաղդասարյանի կողմից իրականացված Նոր Հաճրն համայնքի գյուղ Քանաքեռական 8-րդ փողոց թիվ 28 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՂՆԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04-ը օգոստոսի 2023թ. N 1504

Նոր Հաճրն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ**.

Նոր Հաճրն համայնքին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝

-Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, Առողջարանային փողոց, թիվ 28/1 հասցե:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04-ը օգոստոսի 2023 թ. N 1505

Նոր Հաճրն

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և 912-Ն որոշումների, Նոր Գեղի գյուղի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 75 որոշմամբ՝ **որոշում եմ՝**

1. Նոր Հաճրն համայնքի, Նոր Գեղի գյուղի, Առողջարանային փողոցի, թիվ 28/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0.01977 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասում ինքնակամ կառուցված 77.56 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 2.25 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել Նոր Հաճրն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական: (Հաշվառման ծածկագիր՝ 2023XCMNZM): Հողամասի գործառնական նշանակությունը համապատասխանեցնել գլխավոր հատակագծով նախատեսված նշանակությանը՝ հասարակական կառուցապատման: Փոփոխել հողամասի գործառնական նշանակությունը՝ համարելով բնակելի կառուցապատման:

2) Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում:

3) շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցը իրականացրած Զասիմ Միշայի Մուրադյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար

Գ.Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1507

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 Թ-Ի ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Բյուջետային համակարգի մասին > օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի և 31-րդ հոդվածի դրույթներով՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2024թ-ի բյուջետային գործընթացը սկսել սույն թվականի օգոստոսի 07-ից:

2. Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքապետարանի Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ստեփա Բադալյանին՝ համայնքի ղեկավարին ներկայացնել Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2024թ-ի բյուջեի նախագիծը, մինչև սույն թվականի հոկտեմբերի 16-ը:

3. < Նոր Հաճըն համայնքի ՀՈԱԿ – ների տնօրեններին՝ համայնքի ղեկավարին 2024թ-ի բյուջետային հայտերը ներկայացնել մինչև սեպտեմբերի 25-ը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2023
ք. Նոր Հաճըն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՋԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07-ը օգոստոսի 2023թ. N 1508

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Լևոն Խաչատուրի Ամալյանին տալ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսության, ցանկապատի և ծածկոցի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճրն համայնքի գյուղ Նոր Արտամետ 13-րդ փողոց 1-ին նրբանցք 9 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07-ը օգոստոսի 2023թ. N 1509

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Սամվել Գենադիի Ստեփանյանին տալ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսության, ցանկապատի և ծածկոցի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճըն համայնքի գյուղ Նոր Արտամետ 13-րդ փողոց 1-ին նրբանցք 9/1 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՂՁԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07-ը օգոստոսի 2023թ. N 1510

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Լևոն Պապինի Հովհաննիսյանին տալ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսության, ցանկապատի և ծածկոցի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճրն համայնքի գյուղ Նոր Արտամետ 13-րդ փողոց 1-ին նրբանցք 9/2 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1511

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2387-Ն որոշման կարգի, որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում Միքայել Արսենի Միսակյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադաստրային ծածկագիր 07-025-0014-0144, հիմք՝ <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ-ի արխիվային տեղեկանք Հ-8632, տրված 23.06.2023թ./ տրամադրել հասցե .

- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գ.Գետամեջ, 4-րդ փողոց, 2-րդ փակուղի, 17 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07-ը օգոստոսի 2023թ. N 1512

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Գագիկ Հարությունի Սեդրակյանին տալ ավտոտնակի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճրն համայնքի գյուղ Նոր Գեղի ֆ. Թևոսյան փողոց 5-րդ փակուղի, թիվ 2/8 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1513

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2387-Ն որոշման կարգի, որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում Տիգրան Անուշավանի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադաստրային ծածկագիր 07-025-0010-0016, հիմք ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, նոտարական ակտի կոդ 642-20230712-84-7102796/ տրամադրել հասցե .

- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գ.Գետամեջ, 5-րդ փողոց, 28 բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 օգոստոսի 2023թվականի N 1514

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի N912 որոշման պահանջներով և քանի որ **Տիգրան Անուշավանի Պետրոսյանին** պատկանող հողամասում կառուցված ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չեն կառուցված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն կառուցված քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով համասեփականատերերի դիմումը, որոշում եմ.

1. **Տիգրան Անուշավանի Պետրոսյանին** /հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 642-20230712-84-7102796/ սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքում, Գետամեջ գյուղում 07-025-0010-0016 կադաստրային ծածկագրով, 5-րդ փողոց, 28 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 2001թ. մայիսի 15-ը 175.23քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված բնակելի տունը, 44.59քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 30.40քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 14.03քմ մակերեսով ծածկոցը, 7.42քմ մակերեսով աստիճանահարթակը, 7.14քմ մակերեսով պարիսպը համարել օրինական

(չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ հաշվառում 2023CCB78C):

2. Սույն որոշումն ուժի մեջ է իրագործվում նախորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07-ը օգոստոսի 2023թ. N 1515

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Սոֆիկ Միշայի, Արթուր Սանդրոյի, Արսեն Արթուրի, Քնարիկ Արթուրի Մելիքյաններին տալ նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճրն համայնքի գյուղ Նոր Գեղի Ց. Ղազարյան փողոց 8-րդ նրբանցք թիվ 8 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1516

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2387-Ն որոշման կարգի, որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Քանաքեռավան գյուղում Էռնեստ Էդուարդի Հարությունովին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադաստրային ծածկագիր 07-064-0038-0012, սեփականության վկայական 17052023-07-0214/ տրամադրել հասցե ըստ բաժանման սխեմայի.

1.1 Առանձնացվող հատված 1- 0,0524հա- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գ. Քանաքեռավան, Զովունի ԱՍԿ թաղամասի 7-րդ փողոց, 4/1 հողամաս

1.2 Առանձնացվող հատված 2- 0,073հա- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գ. Քանաքեռավան, Զովունի ԱՍԿ թաղամասի 7-րդ փողոց, 4 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՌՈՂՁՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 օգոստոսի 2023 թ. N 1517

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ որոշում եմ.

1. Ձևակերպել կառուցապատող Դավիթ Կարենի Հայրապետյանի կողմից իրականացված Նոր Հաճըն համայնքի գյուղ Քանաքեռավան 8-րդ փողոց թիվ 39/1 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՒՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 օգոստոսի 2023 թ. N 1518

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ որոշում եմ.

1. Ձևակերպել կառուցապատող Գագիկ Հարազատի Արզումանյանի կողմից իրականացված Նոր Հաճըն համայնքի գյուղ Արգել 8-րդ փողոց թիվ 14 հասցեում գտնվող բնակելի տան ձեռնահարկի վերակառուցման կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1519

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Նորմատիվ իրավականակտերի մասին> օրենքի 37-րդ հոդվածի
<<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13- հոդվածի պահանջներով և հիմք
ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2023 թվականի հուլիս 28-ի N 199-Ա
որոշումը՝որոշում եմ.

1. Հաստատել Նոր Հաճրն համայնքի համայնքային ծառայության մրցութային և
ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի ղեկավարի 22-ը
նոյեմբերի 2016 թվականի «Համայնքային ծառայության մրցութային և
ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 238 որոշումը :
- 3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023
ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08-ը օգոստոսի 2023թ. N 1520

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Վահրամ Հմայակի Գրիգորյանին տալ պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճըն համայնքի գյուղ Նոր Արտամետ 18-րդ փողոց թիվ 5 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09-ը օգոստոսի 2023թ. N 1521

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Վարդան Սամվելի Կարապետյանին տալ պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճրն համայնքի գյուղ Նոր Գեղի Երկաթուղայինների փողոց թիվ 30 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1522

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածը, «Ավդոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ս. Ավդոյանի ներկայացրած հայտը և N 1888162090 վճարման հանձնարարականը՝ որոշում եմ.

- 1.Տալ «Ավդոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (վկայական № 80.00978) համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն 2023 թվականի համար:
- 2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023
ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1523

ԱՎԴՈՅԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածը, «ԱՎԴՈՅԱՆՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ս. Ավդոյանի ներկայացրած հայտը և N 1425613927 վճարման հանձնարարագիրը՝ որոշում եմ.

1. Տալ թույլտվություն «ԱՎԴՈՅԱՆՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (պետական հաշվառման համար՝ 80.00978), Նոր Հաճրն համայնքի Տոռոզյան 6/1 հասցեում գտնվող 501 քառակուսի մետր մակերեսով հիմնական շինության ներսում 2023 թվականի ընթացքում իրականացնելու՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք,

2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, գովազդի, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023

ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1524

ԲՐԵՆԴԼԻԴԵՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածը, «ԲՐԵՆԴԼԻԴԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և N 208122215, 2081222023 վճարման հանձնարարագրերը՝ որոշում եմ.

1. Տալ թույլտվություն «ԲՐԵՆԴԼԻԴԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ((պետական հաշվառման համար՝ N° 269.110.02502)), Նոր Հաճրն համայնքի Թումանյան 5/3 հասցեում գտնվող 553 քառակուսի մետր մակերեսով հիմնական շինության ներսում 2023 թվականի 3-րդ դ եռամսյակի ընթացքում իրականացնելու.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք,

2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, գովազդի, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023
ք.Նոր Հաճրն

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1525

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՄԻՋ Մ. Գ. ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 1 հավելվածը, «ԻՄԻՋ Մ. Գ.» ՍՊԸ ներկայացրած հայտը և N 1899580653 վճարման հանձնարարագիրը՝ որոշում եմ.

- 1.Տալ թույլտվություն «ԻՄԻՋ Մ. Գ.» ՍՊԸ-ին (պետական հաշվառման համար՝ № 29.110.02216) Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Շահումյան Չարենց (խաչմերուկում) հասցեում 2023 թվականի օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում այլ արտաքին գովազդ տեղադրելու համար: 2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023
ք.Նոր Հաճըն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1526

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՎԵԼ
ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի բնակիչ Սոնա Ինջաբեկի Խաչատրյանի 2023 թվականի օգոստոսի 03-ի դիմումը, ինչպես նաև համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 12-ի թիվ 1310 որոշմամբ պայմանավորված **որոշում եմ**.

1. Նոր Հաճըն համայնքի 2023 թվականի բյուջեից վերադարձնել Սոնա Ինջաբեկի Խաչատրյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար Նոր Հաճընի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին ավել վճարած 68120 ՀՀ դրամ գումարը:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտակա ն և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս. Բադալյանին ապահովել վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



09 օգոստոս 2023
ք.Նոր Հաճըն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1527

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀՀԳ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 1 հավելվածը, «ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀՀԳ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և N 1572532396 վճարման հանձնարարականը՝ որոշում եմ.

- 1.Տալ թույլտվություն «ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀՀԳ» ՍՊԸ-ին (պետական հաշվառման համար՝ № 80.110.1232422) Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գայի 5/46 հասցեում 2023 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում այլ արտաքին գովազդ տեղադրելու համար:
- 2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023
ք.Նոր Հաճըն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09-ը օգոստոսի 2023թ. N 1528

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Դավիթ Մակարի Զաքարյանին տալ բնակելի տան և քարե պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճրն համայնքի գյուղ Նոր Գեղի Երկաթուղայինների փողոց թիվ 20 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1529

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Գարիկ Սարգսյանի» ներկայացրած հայտը և N 79494769 վճարման անդորրագիրը՝ որոշում եմ.

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր «Գարիկ Սարգսյանին» (պետական հաշվառման համար՝ 80.01160) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Քանաքեռավան գյուղի Կենտրոն թաղամաս հասցեում գտնվող 19 քառակուսի մետր առևտրային մակերեսով հիմնական շինության ներսում 2023 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք.

2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք.

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023
ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09-ը օգոստոսի 2023թ. N 1530

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. ԼԻԼԻԹ ԵՎ ՍՅՈՒԶԻ ՍՊԸ-ին տալ հասարակական և սպասարկման օբյեկտի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճըն համայնքի Տոռոզյան փողոց թիվ 19 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09-ը օգոստոսի 2023թ. N 1531

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Վահագն Մարատի Մելքոնյանին տալ ավտոտեխսպասարկման կետի և սպասարկման օբյեկտի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճրն համայնքի Ս. Զուլֆյան 2-թաղամաս 3-րդ փողոց թիվ 8 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1532

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2387-Ն որոշման կարգի, որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Քարաշամբ գյուղում Պարթև Սերոբի Ստեփանյանին և Մանիկ Վարդանյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադաստրային ծածկագիր 07-066-0110-0064, հիմք սեփականության իրավունքի վկայական 1475172/ տրամադրել հասցե .

- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գ. Քարաշամբ, Ամառանոցային թաղամասի 10-րդ փողոց, 60 այգետնակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1533

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2387-Ն որոշման կարգի, որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում Վանիկ Համազասպի Ավայանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադաստրային ծածկագիր 07-048-0057-0055/ տրամադրել հասցե.

- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գ. Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան փողոց, 201 բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1534

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2387-Ն որոշման կարգի, որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում Ռուբեն Շաքարի Մարտիրոսյանին և Մարինե Խաչատրյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադաստրային ծածկագիր 07-048-0077-0018, տրամադրել հասցե.

- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գ. Նոր Գեղի, Հ. Ներսիսյան փողոց, 49 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՄԱԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 օգոստոսի 2023թվականի N 1535

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2019թվականի նոյեմբերի 19-ի N225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման՝ հիմք ընդունելով սեփականատերերի դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունը կառուցված չէ՝

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ **որոշում եմ.**

